# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՄԵԾԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մեծավան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Մեծավան, (096)440261, metsavan.lori@mta.gov.am

ելից N338/19
18.հոկտեմբերի 2019թ.

*ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ*
*Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ*

Հարգելի պարոն Ղուկասյան

Կից ներկայացնում եմ Մեծավան համայնքի ավագանու թիվ 33-40 որոշումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Մեծավան համայնք, Ջ. Անդրանիկի N2 էլ. metsavan.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» օգոստոսի 2019 թ. N 33–Ա

## ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 30-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ Մեծավան համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

Հաստատել Մեծավան համայնքի ավագանու 2019 թվականի օգոստոսի 30-ի հերթական նիստի օրակարգը.

1. Մեծավան համայնքի ավագանու 2019 թվականի օգոստոսի 30-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին
2. ՀՀ Լոռու մարզի Մեծավան համայնքի սեփականություն հանդիսացող արդյունաբերական և ընդերքօգտագործման նշանակության 3,2115հա հողամասը (ծածկագիր 06-074-0209-0159) վարձակալական հիմունքներով «ՌԵԴ ՄԹՈՌԻՆ» ՍՊԸ-ին տրամադրելու մասին
3. Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին
4. Մեծավան համայնքի սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության հողամասերը աճուրդային կարգով օտարելու և մեկնարկային գների սահմանման մասին
5. Մեծավան համայնքի սեփականություն համարվող հողերը մրցութային կարգով վարձակալության տալու և մեկնարկային գների սահմանման մասին
6. Սոցիալական ներդրումների և Տարածքային զարգացման ծրագրի մասնակցության հայտը և նախաձեռնող խմբի կազմը հաստատելու մասին
7. ՀՀ Լոռու մարզի Մեծավան համայնքի Մեծավան գյուղի նշված փողոցների վերանվանման մասին
8. ՀՀ Լոռու մարզի Մեծավան համայնքի Միխայլովկա բնակավայրի անվանափոխության մասին

| N/N | ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|---|
| 1 | ԲԵՋՈՅԱՆ ՀՈՎՍԵՓ | | | |
| 2 | ԳԶԻՐԱՆՑ ԷԼԼԱ | | | |
| 3 | ԴՈՒՄԻԿՅԱՆ ԱԼԵՔՍԱՆ | | | |
| 4 | ՄԱՂԱՔՅԱՆ ՄԱՐՏԻՆ | | | |
| 5 | ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ՋԱՎԵՆ | | | |
| 6 | ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՍՈՒՐԵՆ | | | |
| 7 | ՓԵԹԱԿՉՅԱՆ ՎԱՀԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ՎԱՐԴԱՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Մեծավան համայնք, Զ. Անդրանիկի N2 էլ. metsavan.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» օգոստոսի 2019 թ. N 34–Ա

### ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 3,2115ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ(ԾԱԾԿ. 06-074-0209-0159) ՎԱՐՁԱԿԱԼԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ «ՌԵԴ ՍԹՈՈՒՆ» ՍՊԸ-ԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2001թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշման 44-րդ կետի ը) ենթակետի պահանջներով, ՀՀ «Հողային օրենսգրքի» 76-րդ հոդվածի դրույթներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24 կետի պահանջներով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37. հոդվածով

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.**

1. Լոռու մարզի Մեծավան համայնքին ՀՀ կառավարության 2005թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 1886-Ն որոշումով անհատույց փոխանցված հողերց 06-074-0209-0159 ծածկագրի 3,2115հա մակերեսով ընդերքօգտագործման հողամասը համաձայն 2018թվականի մայիսի 16-ի ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության կողմից տրամադրված լեռնահատկացման N L-581 ակտի, ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության օգտակար հանածոների արդյունահանման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման N ՇԱԹ-29/581 թույլտվության, «ՌԵԴ ՍԹՈՈՒՆ» ՍՊԸ-ին օգտակար հանածոյի արդյունահանում կազմակերպելու նպատակով 21տարի (սկսած 16.05.2018թվականից) ժամանակով առանց մրցույթի վարձակալության իրավունքով տրամադրել վերը նշված հողամասը:
2. Հողամասի վարձակալության տարեկան գումարը 92492 ՀՀ դրամ:
3. Ուժը կորցրած ճանաչել Լոռու մարզի Մեծավան համայնքի ավագանու 2018թվականի հոկտեմբերի 5-ի «ՀՀ Լոռու մարզի Մեծավան համայնքին պատկանող արդյունաբերական և ընդերքօգտագործման նշանակության 3,2115հա հողամասը(ծածկագիր 06-074-0209-0159) վարձակալական հիմունքներով «ՌԵԴ ՍԹՈՈՒՆ» ՍՊԸ-ին տրամադրելու մասին» թիվ 37-Ա որոշումը:

| N/N | ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|---|
| 1 | ԲԵՋՈՅԱՆ ՀՈՎՍԵՓ | | | |
| 2 | ԳԶԻՐՅԱՆՑ ԷԼԼԱ | | | |
| 3 | ԴՈՒՄԻԿՅԱՆ ԱԼԵՔՍԱՆ | | | |
| 4 | ՄԱՂԱՔՅԱՆ ՄԱՐՏԻՆ | | | |
| 5 | ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ՋԱՎԵՆ | | | |
| 6 | ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՍՈՒՐԵՆ | | | |
| 7 | ՓԵԹԱԿՉՅԱՆ ՎԱՀԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ՎԱՐԴԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Մեծավան համայնք, Չ. Անդրանիկի N2 կ. metsavan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<30>> օգոստոսի 2019 թվականի N35-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածին, Մեծավան համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մեծավան համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 46-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝ Մեծավան համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի.

2.Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| N/N | ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|---|
| 1 | ԲԵՋՈՅԱՆ ՀՈՎՍԵՓ | [signature] | | |
| 2 | ԳԶԻՐԱՆՑ ԷԼԼԱ | [signature] | | |
| 3 | ԴՈՒՄԻԿՅԱՆ ԱԼԵՔՍԱՆ | [signature] | | |
| 4 | ՄԱՂԱՔՅԱՆ ՄԱՐՏԻՆ | [signature] | | |
| 5 | ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԶԱՎԵՆ | [signature] | | |
| 6 | ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՍՈՒՐԵՆ | [signature] | | |
| 7 | ՓԵԹԱԿՉՅԱՆ ՎԱՀԱՆ | [signature] | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Մեծավան համայնքի ավագանու
2019թվականի օգոստոսի 30 -ի N35-Ա որոշման

1. Գարակյան Նելյա Արտուշի -30.0 հազար դրամ/ սոց. օգնություն /
2. Ստեփանյան Էթերա Ազատի-30.0 հազար դրամ / սոց. օգնություն /
3. Սերոբյան Միսակ Արմենակի- 30.0 հազար դրամ / սոց. օգնություն /
4. Պողոսյան Էմմա Արամի-30.0 հազար դրամ / սոց. օգնություն /
5. Բեգոյան Սարխզ Վանոյի-30.0 հազար դրամ / սոց. օգնություն /
6. Դավոյան Տիրուն Արտուշի-30.0 հազար դրամ / սոց. օգնություն /
7. Մելքոնյան Սյուզաննա Յուրիկի-50.0 հազար դրամ / սոց. օգնություն /
8. Հայրապետյան Զինաիդա Վովայի -30.0 հազար դրամ / սոց. օգնություն /
9. Սարգսյան Լաուրա Սահակի-70.0հազար դրամ / ուսման վարձ/
10. Անախասյան Նարե Կարենի-70.0հազար դրամ / ուսման վարձ /
11. Միրզոյան Անգելիկա Լորիկի-70.0հազար դրամ / ուսման վարձ/

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.ՎԱՐԴԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Մեծավան համայնք, Զ. Անդրանիկի N2 էլ. metsavan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<<30>> օգոստոսի 2019 թվականի N36-Ա

### ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18. հոդվածի 21-րդ կետով, ՀՀ <<Հողային օրենքգրքի>> 63 հոդվածի 3-րդ կետով, 67; 68; 69 և 70 հոդվածներով, ՀՀ կառավարության 2001թվականի ապրիլի 12-ի թիվ 286, որոշման 5-րդ մասով՝ Մեծավան համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Մեծավան համայնքի սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության հողամասերը աճուրդային կարգով օտարել և մեկնարկային գինը սահմանել համաձայն հավելվածի:
2. Մրցույթի մասին հայտարարությունը հրապարակել լրատվական կայքերում/azdarar.am,/ և «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում:

| N/N | ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|---|
| 1 | ԲԵՋՈՅԱՆ ՀՈՎՍԵՓ | | | |
| 2 | ԳՁԻՐԱՆՑ ԷԼԼԱ | | | |
| 3 | ԴՈՒՄԻԿՅԱՆ ԱԼԵՔՍԱՆ | | | |
| 4 | ՄԱՂԱՔՅԱՆ ՄԱՐՏԻՆ | | | |
| 5 | ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ՋԱՎԵՆ | | | |
| 6 | ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՍՈՒՐԵՆ | | | |
| 7 | ՓԵԹԱԿՉՅԱՆ ՎԱՀԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հավելված
Մեծավան համայնքի ավագանու
2019թվականի օգոստոսի 30-ի
թիվ 36-Ա որոշման

| N/N | Հողատեսքեր | Հողամասի չափը /հա/ | Հողամասի ծածկագիրը | Մրցույթի մեկնարկային գինը /1քառ. մ/ ՀՀ դրամ |
|---|---|---|---|---|
| 1 | Գյուղատնտեսական նշանակության արտադրական օբյեկտներ | 6.80646 | 06-064-0032-0001 | 70 |
| 2 | Գյուղատնտեսական նշանակության արտադրական օբյեկտներ | 0.17996 | 06-064-0032-0002 | 70 |
| 3 | Գյուղատնտեսական նշանակության արտադրական օբյեկտներ | 1.94375 | 06-064-0112-0015 | 70 |
| 4 | Գյուղատնտեսական նշանակության արտադրական օբյեկտներ | 1.6822 | 06-064-0028-0001 | 70 |
| 5 | Գյուղատնտեսական նշանակության արտադրական օբյեկտներ | 1.2328 | 06-064-0027-0001 | 70 |
| 6 | Գյուղատնտեսական նշանակության արտադրական օբյեկտներ | 0.82773 | 06-064-0112-0013 | 70 |
| 7 | Գյուղատնտեսական նշանակության արտադրական օբյեկտներ | 2.13075 | 06-064-0114-0001 | 70 |
| 8 | Գյուղատնտեսական նշանակության արոտավայր | 3,52088 | 06-077-0178-0052 | 46 |
| 9 | Գյուղատնտեսական նշանակության արոտավայր | 0.08997 | 06-077-0181-0006 | 46 |
| 10 | Գյուղատնտեսական նշանակության արոտավայր | 0.97755 | 06-077-0179-0005 | 46 |
| 11 | Գյուղատնտեսական նշանակության արոտավայր | 0.93514 | 06-077-0181-0005 | 46 |
| | | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Մեծավան համայնք, Զ. Անդրանիկի N2 էլ. metsavan.lori@mta.gov.am


# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<<30>> օգոստոսի 2019 թվականի N 37-Ա

### ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԵՐԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18. հոդվածի 21-րդ կետով՝ Մեծավան համայնքի ավագանին

### ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Մեծավան համայնքի սեփականություն համարվող հողերը մրցութային կարգով տալ վարձակալության և վարձակալության մեկնարկային գինը սահմանել համաձայն հավելվածի:
2. Մրցույթի մասին հայտարարությունը հրապարակել լրատվական կայքերում/azdarar.am/ և <<Հայաստանի Հանրապետություն>> օրաթերթում:

| N/N | ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|---|
| 1 | ԲԵՋՈՅԱՆ ՀՈՎՍԵՓ | | | |
| 2 | ԳԶԻՐԱՆՑ ԷԼԼԱ | | | |
| 3 | ԴՈՒՄԻԿՅԱՆ ԱԼԵՔՍԱՆ | | | |
| 4 | ՄԱՂԱՔՅԱՆ ՄԱՐՏԻՆ | | | |
| 5 | ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ՋԱՎԵՆ | | | |
| 6 | ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՍՈՒՐԵՆ | | | |
| 7 | ՓԵԹԱԿՉՅԱՆ ՎԱՀԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հավելված
Մեծավան համայնքի ավագանու
2019թվականի օգոստոսի 30-ի
թիվ 37-Ա որոշման

| N/N | Հողատեսքեր | Հողամասի չափը /հա/ | Հողամասի ծածկագիրը | Մրցույթի մեկնարկային գինը /1հա/ | Լոտերի քանակը |
|---|---|---|---|---|---|
| 1 | Վարելահող 2-րդ կարգի | 33,17<br><br>1.02<br>1.51 | 06-074-221,06-074-223, 06-074-238, 06-074-239, 06-074-224<br>06-064-0102-041<br>06-064-0102-039 | 9200 | 4 |
| 2 | Վարելահող 4-րդ կարգի | 166,6<br><br><br><br>0.28079 | 06-074-209, 06-074-210,<br>06-074-212, 06-074-218, 06-074-236, 06-074-254, 06-074-256, 06-074-265, 06-074- 282 ,06-074-290, 06-074-291<br>06-064-0218-0086 | 5000 | 6 |
| 3 | Արոտ 4-րդ կարգի | 131.86 | 06-090-106-002 | 2800 | 2 |
| 4 | Վարելահող 3-րդ կարգի | 18,26<br>0.949 | 06-074-260<br>06-064-0102-073 | 7000 | 4 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Մեծավան համայնք, Զ. Անդրանիկի N2 էլ. metsavan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» օգոստոսի 2019 թ. N 38–Ա

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԸ ԵՎ ՆԱԽԱՁԵՌՆՈՂ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով ՀՏԶՀ-ի առաջարկը և Մեծավան համայնքի ղեկավարի առաջարկությունը, Մեծավան համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Հաստատել Սոցիալական ներդրումների և Տարածքային զարգացման ծրագրի մասնակցության «Մեծավան համայնքի կոմունալ ծառայությունների բարելավում և ճանապարհների սպասարկում» հայտը:
2. Ստեղծել նախաձեռնող խումբ Սոցիալական ներդրումների և Տարածքային զարգացման ծրագրին մասնակցության հայտ ներկայացնելու համար և հաստատել նախաձեռնող խմբի կազմը՝

1. Սերյոժա Վարդանյան - համայնքի ղեկավար
2. Արուսյակ Դումիկյան-համայնքի ղեկավարի տեղակալ
3. Լևոն Դիլբարյան – Միխայլովկա բնակավայրի վարչական ղեկավար
4. Ռոբերտ Դումիկյան- Պաղաղբյուր բնակավայրի վարչական ղեկավար
5. Գարրի Գրիգորյան-Ձյունաշող բնակավայրի վարչական ղեկավար
6. Հովսեփ Բեզոյան-ավագանու անդամ
7. Ալեքսան Դումիկյան-ավագանու անդամ
8. Արմինե Աղամյան -Մեծավանի «Մշակույթի կենտրոնի» տնօրեն
9. Աննա Բաղդասարյան-Մեծավանի համայնքապետարանի 2-րդ կարգի մասնագետ
10. Արտեմ Խանաղյան - Մեծավանի համայնքապետարանի 1-ին կարգի մասնագետ

| N/N | ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ | ԿՈՂՄ՝ | ԴԵՄ՝ | ՁԵՌՆՊԱՀ՝ |
|---|---|---|---|---|
| 1 | ԲԵԶՈՅԱՆ ՀՈՎՍԵՓ | | | |
| 2 | ԳԶԻՐՅԱՆՑ ԷԼԼԱ | | | |
| 3 | ԴՈՒՄԻԿՅԱՆ ԱԼԵՔՍԱՆ | | | |
| 4 | ՄԱՂԱՔՅԱՆ ՄԱՐՏԻՆ | | | |
| 5 | ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԶԱՎԵՆ | | | |
| 6 | ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՍՈՒՐԵՆ | | | |
| 7 | ՓԵԹԱԿՉՅԱՆ ՎԱՀԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ՎԱՐԴԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Մեծավան համայնք, Զ. Անդրանիկի N2 էլ. metsavan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**«30» օգոստոսի 2019 թ. N 39–Ա**

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵԾԱՎԱՆ ԳՅՈՒՂԻ ՆՇՎԱԾ ՓՈՂՈՑՆԵՐԻ ՎԵՐԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Նկատի ունենալով Մծավան համայնքի որոշ փողոցների ժամանակավրեպ լինելու հանգամանքը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով Մեծավան համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Մեծավան գյուղի Գագարինի փողոցը վերանվանել Տիգրան Մեծ, Գրիբոյեդովի փողոցը վերանվանել Խորենացի, Շիրակի փողոցը վերանվանել Շիրազի, Պուշկինի փողոցը վերանվանել Մոնթե և Սպանդարյան փողոցը վերանվանել Բաղրամյան:

| N/N | ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|---|
| 1 | ԲԵՋՈՅԱՆ ՀՈՎՍԵՓ | | | |
| 2 | ԳԶԻՐԱՆՑ ԷԼԼԱ | | | |
| 3 | ԴՈՒՄԻԿՅԱՆ ԱԼԵՔՍԱՆ | | | |
| 4 | ՄԱՂԱՔՅԱՆ ՄԱՐՏԻՆ | | | |
| 5 | ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ՋԱՎԵՆ | | | |
| 6 | ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՍՈՒՐԵՆ | | | |
| 7 | ՓԵԹԱԿՉՅԱՆ ՎԱՀԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Մեծավան համայնք, Զ. Անդրանիկի N2 էլ. metsavan.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» օգոստոսի 2019 թ. N 40–Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻԽԱՅԼՈՎԿԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԱՆՎԱՆԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառվարման մասին » ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 33-րդ կետով և հիմք ընդունելով Միխայլովկա բնակավայրի բնակիչների կարծիքը բնակավայրի անվանափոխության վերաբերյալ՝ Մեծավան համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Մերժել ՀՀ Լոռու մարզի Մեծավան համայնքի Միխայլովկա բնակավայրի Տաշրաբակ անվանումը:
2. Վարչական բնակավայրի ղեկավարին՝ առաջարկել բնակավայրի համար համապատասխան նոր անվանում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| N/N | ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|---|
| 1 | ԲԵՋՈՅԱՆ ՀՈՎՍԵՓ | | | |
| 2 | ԳԶԻՐԱՆՑ ԷԼԼԱ | | | |
| 3 | ԴՈՒՄԻԿՅԱՆ ԱԼԵՔՍԱՆ | | | |
| 4 | ՄԱՂԱՔՅԱՆ ՄԱՐՏԻՆ | | | |
| 5 | ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ՋԱՎԵՆ | | | |
| 6 | ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՍՈՒՐԵՆ | | | |
| 7 | ՓԵԹԱԿՉՅԱՆ ՎԱՀԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.ՎԱՐԴԱՆՅԱՆ